32

2

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՄԵՆՏԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆ Է

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1987

3 1 JAN 2016

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

ԳԳԿ

Հայաստանի պետական ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՍՐ
1-3716գր

32

Դ. ԴԻՄԻՏՐՈՎ.

ՄԻՔԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՄԵՆՏԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՊԱՇԱՆՋՆԵ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1937 ● ԵՐԵՎԱՆ

Г. ДИМИТРОВ

ЕДИНСТВО МЕЖДУНАРОДНОГО ПРОЛЕТАРИАТА ВЫСШЕЕ ВЕЛЕНИЕ ПЕРЕЖИВАЕМОГО МОМЕНТА

Армпартиздат, Ереван, 1937

I

Ներկա մոմենտում միջազգային ամբողջ իրադրությունը հատկանշվում է նրանով, որ ֆաշիզմը տենդորեն նախապատրաստվում է կատարելու աշխարհի նոր վերաբաժանումը զավթողական պատերազմի ճանապարհով և միաժամանակ նրանով, որ միջազգային պրոլետարիատը միասնություն է հաստատում և աշխատավորության ուժերը համախմբում՝ ֆաշիզմի և պատերազմի դեմ կռիվ մղելու համար:

Ֆաշիստական ագրեսորները Արևմուտքում և Արևելքում չտատալում են ամեն կերպ համաձայնության գալ իրենց ագրեսիայի ճանապարհների, միջոցների ու օբյեկտների վերաբերմամբ: Բեռլինը, Հռոմը և Տոկիոն բազմատեսակ պակտերով ու ռազմական պայմանագրերով կապվում են միմյանց հետ:

Հիտլերի և Մուսսոլինիի ինտերվենցիան Իսպանիայում, իսպանական ժողովրդի դեմ նրանց պատերազմը նույնպես, ինչպես և ճապոնական ռազմամոլների գործողությունները Չինաստանում, անկասկած, մեծ պատերազմի նախապատրաստության ետապներ են հանդիսանում:

Չնայած շահերի այն տարբերությանը, որ գոյություն ունի պատերազմի այս հրձիգների միջև, նրանք միացած ջանքերով քայքայիչ աշխատանք են կատարում խաղաղության կողմնակից ոչ-ֆաշիստական յերկիրներում, ամեն կերպ աջակցում են այդ յերկիրների ռեակցիոն կուսակցություններին և խմբերին, իրենց համար և իրենց նպատակներին չհարմարող կառավարությունների և ռեժիմների դեմ կազմակերպում են հեղաշրջումներ, ամենուրեք հակահեղափոխական անարխիա յեն սերմանում: Նրանց վոճրագործ ձեռքը կարելի յե տեսնել թե այն դավաճանական գործունեության մեջ, որ կատարում են դե լա Ռոկը և Դորիոն Ֆրանսիայում, Դեգրելը Բելգիայում, Հանլեյնը Չեխոսլովակիայում, այդ ձեռքը կարելի յե տեսնել Ֆաշիստների մեքենայությունների մեջ Սկանդինավյան և Բալկանյան յերկիրներում, Հունգարիայում և Ավստրիայում, Լեհաստանում և Մերձբալթյան պետություններում, Չինաստանի ճապոնասեր տարրերի քաղաքականության մեջ՝ և Հերստի շրջանների գործողությունների մեջ՝ Ամերիկայի միացյալ նահանգներում:

Կենսականորեն շահագրգռված լինելով ֆաշիստական ագրեսիայի հանդեպ ժողովուրդների պաշտպանունակության առավելագույն թուլացմամբ, բանվորական շարժման կազմալուծմամբ և կազմավորվող ժողովրդական ճակատի վիժեցմամբ, ֆաշիստական ագրեսորները ամենուրեք այդ նպատակների համար ոգտագործում են տրոցկիստներին, իբրև իրենց գործակալների: Նրանք իրենց հովանավորության տակ են առնում IV ինտերնացիոնալը, բանվոր դասակարգի դավաճանների ու renեգատների և վոստիկանական պահնորդական

բաժինների գործակալների այդ խառնիճաղանճ հավաքույթը։ Ֆաշիստների կատաղությունն ուղղված է հատկապես Խորհրդային Միության դեմ, սոցիալիզմի մեծ յերկրի դեմ, խաղաղության, ազատության և ամբողջ մարդկության առաջադիմության այդ հզոր հենարանի, ֆաշիստական ագրեսիայի ճանապարհի վրա կանգնած այդ մեծագույն խոչընդոտի դեմ։

Վոչ մի կասկած չկա, վոր Գերմանիայի և Իտալիայի ֆաշիստական կառավարությունները և Ճապոնիայի ֆաշիստական ռազմամոլները արդեն վառած կլինեին համաշխարհային պատերազմի հրդեհը, յեթե չլիներ խաղաղության այնպիսի հզոր պահակ, ինչպիսին Խորհրդային Միությունն է, յեթե միջազգային պրոլետարիատի շարքերում չկատարվեին լուրջ տեղաշարժեր՝ ֆաշիզմի դեմ պայքարն ուժեղացնելու և ժողովրդական միասնական ճակատ ստեղծելու ուղղությամբ, յեթե իսպանական ժողովուրդը չկարողանար այնպես հերոսաբար հետ մղել ֆաշիզմի հարձակումները, յեթե

ֆրանսական պրոլետարիատը ժողովրդական հակաֆաշիստական ճակատ չստեղծեր և չինական ժողովուրդը չկնար ճապոնական զավթիչների դեմ իր ուժերը համազգային ճակատում միավորելու ճանապարհով։

Բայց այս բոլորը միայն դժվարացնում է պատերազմի ֆաշիստ հրձիգների չարանենգ պլանների իրագործումը. նրանք չհրաժարվեցին իրենց պլաններից և յերբեք ինքնակամ կերպով չեն հրաժարվի։ Գվադալախարայի մոտ Մուսսոլինիի ֆաշիստական հրոսակները ջախջախվելուց հետո ռուսերկրյա ինտերվենտները զինված նոր ուժեր են նետում իսպանական ժողովրդի դեմ։ Հիտլերը, յերեխայական միամտությամբ և քաղաքական կուրությամբ տառապող լեյբուրիստական առաջնորդ Լենսբերիին խաղաղասիրական հայտարարություններ անելով, ուժգնորեն հարված է պատրաստում Չեխոսլովակիայի դեմ, վորի, իբրև ինքնուրույն պետության վոչնչացումը, ըստ ֆաշիստական կոնցեպցիայի, անհրաժեշտ է «Եվրոպան խաղաղացնելու» համար։ Գերմա-

նական ֆաշիզմը պատրաստում է Ավստրիայի կլանումը, նախապատրաստում է ֆաշիստական հեղաշրջումներ Բելգիայում և մի շարք ուրիշ յերկիրներում։ Ճապոնական ռազմամոլները իրենց կողմից ամեն կերպ աշխատում են ջախջախել դեմոկրատական ոպոզիցիան իրենց տան մեջ, վորպեսզի այնքան ավելի մեծ ագրեսիվությամբ հարձակվեն չինական ժողովրդի վրա։

Շատ տարիների փորձով ապացուցված է, վոր վոչ մի հորդոր չի կարող կանգնեցնել պատերազմի ֆաշիստ-հրձիգներին։ Նրանց սանձահարելու համար միայն մի գործուն միջոց կա—դա ժողովրդական մասսաների անընդհատ միացյալ պայքարն է ֆաշիզմի դեմ առանձին յերկիրներում և միջազգային մասշտաբով։ Աշխատավորության բոլոր շերտերին, առաջադիմական, դեմոկրատական բոլոր տարրերին, խաղաղության բոլոր անկեղծ կողմնակիցներին իր շուրջը համախմբող միջազգային պրոլետարիատի միասնական գործողությունն է միայն, վոր ի վիճակի յե սանձահարելու

կապը կորած ֆաշիստական լիտիներին և ընդմիշտ թաղելու նրանց ավազակային պլանները։

Վերջին ժամանակվա բոլոր անցքերը ցույց են տալիս, վոր այնտեղ, վորտեղ պրոլետարիատը հանդես է գալիս ֆաշիզմի դեմ միասնաբար ու վճռական կերպով, վորտեղ աշխատավոր մասսաները համախմբված են հակաֆաշիստական միացյալ ճակատի մեջ, ֆաշիզմը չի կարողանում ստրկացնել բանվոր դասակարգին, չի կարողանում ճորտացնել ժողովրդին, վոր վճռել է բոլոր միջոցներով անձնվիրաբար պաշտպանել իր իրավունքները, իր ազատությունն ու անկախությունը։

Ֆաշիզմի գինված դրոհներն անընկուն կերպով հետ մղող իսպանական ժողովրդի ինքնամոլ պայքարը, ժողովրդական ճակատի հաջողությունները Ֆրանսիայում, հակաճապոնական աճող շարժումը Չինաստանում արդեն հանդեցրին այնպիսի արդյունքների, վորոնք անվիճելի կերպով հաստատում են այս ճշմարտությունը, ինչպես

այդ հաստատում է ֆաշիզմի և պատերազմի դեմ մղվող կռվի գործում միասնական ժողովրդական ճակատի ունեցած ամբողջ պատմական նշանակությունը: Այժմ յուրաքանչյուր վոք մի շարք յերկիրների կենդանի որինակներով կարող է համոզվել, վոր այնտեղ, վորտեղ ստեղծված է ժողովրդական ճակատը, վորտեղ մասսաները հակահարված են տալիս ֆաշիզմին և վոչ թե հետևում են «մի՛ դրդոիր ֆաշիստական գազանին» փտած թեորիային,—այնտեղ ֆաշիզմը պարտություն է կրում: Վոչ-ֆաշիստական յերկիրներում ժողովրդական ճակատի ունեցած հաջողությունները վոչ միայն վակում են ֆաշիզմի ճանապարհն այդ յերկիրներում, այլև անդիմադրելի ազդեցություն են գործում ֆաշիստական դիկտատուրայի յերկիրների ժողովրդական մասսաների վրա և խախտում են ֆաշիզմի հիմքերը: Արդեն այն առաջին լուրջ պարտությունները, վոր կրեցին ֆաշիստական ինտերվենտներն Իսպանիայում, մանավանդ Գվադալախարայի մոտ, բարձրացրին ֆաշիստական ռեժիմի ներքին փտությունը, հակասությունները և անկայունությունը ծածկող վարագույրը և հանդեցրին հակաֆաշիստական տրամադրությունների ուժեղացման՝ Գերմանիայում ու Իտալիայում:

II

Ներկա ժամանակաշրջանում պատմությունը միջազգային պրոլետարիատի վրա մեծ միսիա յե դնում — մարդկությունը փրկել ֆաշիզմի բարբարոսությունից, ֆաշիզմի կողմից պատրաստվող իմպերիալիստական սպանդի սարսափներից:

Ոգնել իսպանական ժողովրդին ազատագրվելու ֆաշիստական բռնացողներից ու ինտերվենտներից, ոգնել գերմանական և իտալական ժողովուրդներին փչրելու ֆաշիստական ռեժիմի շղթաները, ոգնել չինական ժողովրդին ճապոնական հափշտակիչների դեմ նրա մղած պայքարում, ոգնել փոքր ազգերին պաշտպանելու իրենց ազատությունն ու անկախությունը, ստեղծել արևմուտքում և արևելքում անառիկ բարյեր ֆաշիստական ագրեսիայի դեմ—ահա՛ ետապում այս է միջազգային պրոլետա-

ըիատի պատմական մխիթան կատարելու կոնկրետ ուղին: Ցեվ այս մխիթայի կատարումը միանգամայն համապատասխանում է պրոլետարիատի ուժերին, յեթե նա դրծի միասնաբար և կազմակերպված ձևով:

Միջազգային պրոլետարիատի ամենաառաջավոր ջոկատը—Խորհրդային Միության բանվոր դասակարգը—պետականորեն կազմակերպված ուժ է հանդիսանում: Նա գլխավորում է մի հզոր պետություն, վորը բոլոր ժողովուրդների խաղաղության և ազատության պահակ է կանգնած: Ցերկրագնդի մեկ վեցերորդ մասում ԽՍՀՄ բանվոր դասակարգը Լենինի–Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ, տապալելով կալվածատերերին ու կապիտալիստներին, հաստատելով պրոլետարական դիկտատուրա, հասավ սոցիալիզմի հաղթանակին և կերտում է իսկական դեմոկրատիզմ, վոր ամրացված է ԽՍՀՄ նոր Սահմանադրության մեջ: Խորհուրդների Համամիութենական VIII Արտակարգ համագումարում տված իր զեկուցման մեջ այդ Սահմանադրության միջազգային մեծագույն նշանակության մասին ընկեր Ստալինն ասել է.

«Այժմ, յերբ Ֆաշիզմի պղտոր ալիքը լուսանք է թափում բանվոր դասակարգի սոցիալիստական շարժման վրա և ցեխի հետ է խառնում քաղաքակիրթ աշխարհի լավագույն մարդկանց դեմոկրատական ձգտումները, ԽՍՀՄ–ի նոր Սահմանադրությունը մի մեղադրական ակտ կլինի Ֆաշիզմի դեմ, մի ակտ, վորն ասում է, թե սոցիալիզմը և դեմոկրատիան անպարտելի յեն: ԽՍՀՄ–ի նոր Սահմանադրությունը բարոյական ոգնություն և իրական ոժանդակություն կլիներ բոլոր նրանց համար, ովքեր այժմ կռիվ են մղում Ֆաշիստական բարբարոսության դեմ»[1]:

---

1 Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, էջ 65—66, Հայկուսհրատ, 1937 թ.:

Միջազգային պրոլետարիատի մյուս հերոսական ջոկատը — Իսպանիայի բանվոր դասակարգը կռվում է ֆաշիզմի դեմ առաջավոր դիրքերում, ավելի ու ավելի խիտ սեղմելով իր շարքերը և իսպանական ժողովրդի շարքերը հակաֆաշիստական ժողովրդական ճակատում: Իբրև ժողովրդական ճակատի կառավարության շուրջը համախմբված զինված ժողովրդի առաջատար ուժ, իսպանական պրոլետարիատը պաշտպանում է ոչ միայն իր յերկրի ազատությունն ու անկախությունը, այլ և ամբողջ միջազգային պրոլետարիատի շահերը, դեմոկրատիայի և խաղաղության ընդհանուր գործը:

Ֆրանսիայի բանվոր դասակարգը, վոր բանն սկսել է իր շարքերում միասնական ճակատ հաստատելով, միավորել է արհմիությունները Աշխատանքի կոնֆեդերացիայի մեջ—միասնական մի կազմակերպության մեջ, վորն ընդգրկում է հինգ միլիոնից ավելի բանվորներ: Նա ստեղծել է ժողովրդական ճակատ, վորին զարնվելով՝

1-37/69

վիրվում են ֆրանսական ֆաշիզմի բոլոր մեքենայությունները: Ֆրանսիայի ժողովրդական ճակատի հաջողություններն ուժգնորեն խթանում են մյուս յերկիրների ժողովրդական ճակատի շարժումը:

Միացյալ նահանգների բանվոր դասակարգն Ամերիկայի պատմության մեջ առաջին անգամ յերևան է բերում իր ինքնուրույնությունը իբրև դասակարգ, միավորելով իր ուժերը մասսայական արհեստակցական միություններում և ակտիվորեն հանդես գալով ֆաշիզմի և ռեակցիայի դեմ յերկրի դեմոկրատական և առաջադիմական ուժերի առաջին շարքերում:

Անգլիայի բանվոր դասակարգը, վոր յերկրի բնակչության ճնշող մեծամասնությունն է կազմում և ունի հզոր կազմակերպություններ, ինքնին հանդիսանում է մի այնպիսի հսկայական ուժ, վորի տեսակարար կշիռը, համաշխարհային քաղաքականության ասպարեզում Անգլիայի գրաված հատուկ դրության շնորհիվ, մեծանում է միջազգային բանվորական շարժման մեջ:

Հանրապետական գրադարան ՀԱՍԱՐ

Լեյբորիստական և կոմունիստական շարժման բոլոր ուժերի մարտական միասնական գործողություններ ունենալու պարագայում անգլիական պրոլետարիատը վոչ միայն ի վիճակի կլինի դեն դցելու ամեն մի ռեակցիա իր յերկրում, այլև կարևոր դեր խաղալու ֆաշիզմի և պատերազմի դեմ մղվող միջազգային պայքարում:

Մանրամասն չխոսելով մնացած բոլոր յերկիրների մասին, կարելի յե առանց վոր-յեվե չափազանցման նշել, վոր հանուն բանվոր դասակարգի միասնության հանդես յեկող շարժումը աճում է, թեև վոչ բոլոր տեղերում միևնույն տեմպերով, վոչ միայն այն յերկիրներում, վորոնք գտնվում են ֆաշիզմի և ֆաշիստական պետությունների ագրեսիայի սպառնալիքի տակ, այլև ֆաշիստական դիկտատուրայի յերկիրներում:

Գլխավորն այժմ այն է, վոր ել ավելի սմրացնելով բանվոր դասակարգի միասնությունն ազգային մասշտաբով, գտնենք մի այնպիսի ընդհանուր լեզու, ընդհանուր պլատֆորմ, վոր պրոլետարիատին հնարավորություն ապահովի միացյալ ճակատով հանդես գալու միջազգային մասշտաբով իր ժամանակին կենտրոնացնելու գլխավոր ուժերը ֆաշիզմի դեմ մղվող պայքարի այն ճակատամասերում, վորոնք ամենից ավելի կարևորներն են յուրաքանչյուր տվյալ մոմենտում:

Ընդհանուր թշնամու, ամբողջ մարդկության մահացու թշնամու—ֆաշիզմի դեմ միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնություն հաստատելը հանդիսանում է ամբողջ աշխարհի բանվորական կազմակերպությունների հիմնական անհետաձգելի խնդիրը, ընթացիկ մոմենտի հրամայական պահանջը:

Դժվար ու մեծ խնդիր է այս, վոր բանվորական շարժման սովորական ընթացիկ խնդիրների շրջանակներից դուրս է գալիս: Սակայն այդ խնդրի լուծումն արմատապես կփոխի քաղաքական անցքերի ընթացքը, նոր ուղղություն կտա նրանց՝ հոգուտ աշխատավորության, բանվոր դասակարգն ու նրա կազմակերպությունները

կղարձնի մի այնպիսի ուժ, վորը խոշորագույն ազդեցություն կունենա ինչպես իր ժողովրդի, այնպես էլ ամբողջ մարդկության ճակատագրի վրա:

Պատմական հսկայական նշանակություն ունեցող այս խնդրի կենսագործման համար ի՞նչ բան է անհրաժեշտ առաջին հերթին:

Առաջին, պետք է, վոր բանվորական բոլոր կազմակերպությունները դիտակցեն գլխավոր թշնամու դեմ, խոշոր բուրժուազիայի ամենից ավելի ռեակցիոն մասի հարվածային բռունցքի—ֆաշիզմի դեմ կռիվը կենտրոնացնելու անհրաժեշտությունը: Հարկավոր է, վոր բանվորական բոլոր կազմակերպություններն իրենց քաղաքականությունը վորոշելիս յելակետ ունենան սեփական դասակարգի շահերի պաշտպանությունը, և վոչ թե գործեն բուրժուազիայի շահերի ոգուն: Իրենց դասակարգային շահերից յելնելով բանվոր դասակարգը և նրա կազմակերպությունները դրանով իսկ պաշտպանում են բոլոր շահագործվողների, ամբողջ ժողովրդի շահերը: Պետք է վերջ

տալ շահագործողների և շահագործվողների շահերի հաշտեցման քաղաքականությանը: Չի կարելի միաժամանակ և՛ ֆինանսական մագնատների կողմը լինել, և՛ աշխատավորության կողմը: Չի կարելի, ինչպես ասում են, ծառայել միաժամանակ թե՛ աստծուն, թե՛ մամոնային: Չի կարելի լինել թե՛ խռովարար գեներալների, թե՛ իսպանական ժողովրդի հետ: Չի կարելի կողմնակից լինել իսպանական ժողովրդի հաղթանակին և կոմպրոմիս փնտռել գեներալ Ֆրանկոյի հետ: Չի կարելի խոսքով յերդվել, թե համակրությունն Իսպանական հանրապետության կողմն է, իսկ գործով, ի հաճույս անգլիական պահպանողականների, հրաժարվել այդ հանրապետությանը պաշտպանության միջոցներ տալուց: Չի կարելի հայտարարել ֆաշիզմի դեմ կռվելու իր պատրաստակամության մասին և միևնույն ժամանակ հալածել կոմունիստներին, վորոնք ամենահետևողական մարտիկներն են ֆաշիստական բռնաբարողների դեմ:

Երկրորդ, անհրաժեշտ է սանձահարել բանվորական շարժման շարքերում գտնվող՝ միասնական նպատակի թշնամիներին: Բանվորական մասսաները ծարավի չեն գործողությունների միասնության, սակայն անքննադատ վերաբերմունքը դեպի «հեղինակությունները», այն հանգամանքը, որ վատ է ըմբռնվում իր կազմակերպության հանդեպ ունենալիք նվիրվածությունը, հաճախ բանվորներին խանգարում են դուրս գալու այն լիդերների դեմ, որոնք իրենց անազնիվ մանյովրներով վիժեցնում են միացյալ ճակատի ստեղծումը: Բանի որ այդ լիդերները չեն ուզում յենթարկվել բանվոր դասակարգի ընդհանուր դերադույն կամքին, քանի որ նրանք նախընտրում են բուրժուազիային ծառայել, իրենց անձնական կարյերիստական շահերը բարձր են դասում բանվոր դասակարգի շահերից, ապա բանվորական յուրաքանչյուր կազմակերպության տարրական պարտականությունն է իր մեջ գտնել բավականաչափ արիություն, գտնել ճանապարհներ և միջոցներ՝

կենսագործելու միասնականության վերաբերյալ իր կամքը, չնայած բոլոր արգելքներին:

Երրորդ, անհրաժեշտ է ամենավճռական հակահարված տալ բոլոր նրանց, ովքեր զրպարտչական կամպանիա յեն մղում ԽՍՀՄ-ի դեմ: ԽՍՀՄ դեմ մղվող պայքարը—այդ պայքար է սոցիալիզմի դեմ, բանվոր դասակարգի մեծ նպատակի դեմ, որ դրված է ամբողջ աշխարհի բանվորական կազմակերպությունների ճնշող մեծամասնության ծրագրում: ԽՍՀՄ դեմ մղվող պայքարը—այդ մի պայքար է, որ ուղղված է մարդկության պատմության մեջ յեղած այն մեծագույն հաղթանակների դեմ, որ ձեռք է բերել բանվոր դասակարգը, հաղթանակ, որ բաղմապատկում է ամբողջ միջազգային պրոլետարիատի ու աշխատավորության ուժերը: ԽՍՀՄ դեմ մղվող պայքարը—այդ ֆաշիստների նենգավոր պլանի կարևորագույն մասն է, որի նպատակն է տրոհել միջազգային պրոլետարիատի ուժերը, որպեսզի հեշտ լինի նրան մաս

առ մաս հարվածել, ջախջախել բանվորական շարժումը, ստրկացնել բանվոր դասակարգն ու կապիտալիստական յերկիրների ամբողջ աշխատավորությունը ֆաշիստական դիկտատուրայի լծի տակ։ Չի կարելի թշնամի լինել ֆաշիզմին և միևնույն ժամանակ պայքարել ԽՍՀՄ-ի դեմ, միջազգային հակաֆաշիստական շարժման այդ ֆորպոստի դեմ։ Չի կարելի սոցիալիստ լինել և մինչև անգամ ազնիվ դեմոկրատ լինել վրճռականորեն և անվերապահ կերպով չկանգնելով Խորհրդային Միության կողմը—սոցիալիզմի և իսկական համաժողովրդական դեմոկրատիայի մեծ յերկրի կողմը։ Ըստ բանի Եյության Խորհրդային Միության հանդեպ հայտնաբերվող վերաբերմունքը բանվորական շարժման յուրաքանչյուր դրծչի և բանվորական յուրաքանչյուր կազմակերպության համար փորձաքար է՝ ստուգելու նրանց նվիրվածությունը բանվոր դասակարգի շահերին, նրանց հավատարմությունը սոցիալիզմի նկատմամբ։

Զորրորդ, ֆաշիզմի դեմ պայքար մղելիս անհրաժեշտ է ամբողջ անողոքությամբ հարվածել ֆաշիզմի տրոցկիստական գործակալությանը, վորը գերմանական ֆաշիզմի և ճապոնական ռազմամոլների մոտ ծառայության մտած լրտեսների, դիվերսանտների, տեռորիստների, պրովոկատորների մի բանդա յե։ Տրոցկիստական վիժվածքները ֆաշիստական հետախուզությունների առաջադրանքների համաձայն քայքայիչ աշխատանք են կատարում սոցիալիզմի յերկրի դեմ, ամեն ինչ անում են, վորպեսզի մյուս յերկիրների բանվորական շարժման պառակտումը խստացնեն և խափանեն այդ շարժման միասնություն ստեղծելու գործը, ջանք են թափում ներքուստ քայքայելու ժողովրդական ճակատի շարժումը։ Ամենուրեք նրանք հանդես են գալիս իբրև բանվորական շարժման վնասարարներ, ժողովրդական մասսաների կողմից ֆաշիզմի դեմ մղվող պայքարի կազմալուծողներ։ Միջազգային պրոլետարիատի միասնությունը ֆաշիզմի և պատերազմի դեմ անհրաժեշտ յե և անհնարին առանց

պայքար մղելու ֆաշիզմի տրոցկիստական գործակալության դեմ։

Սրանք են ամենատարրական այն պայմանները, որոնք անհրաժեշտ են ֆաշիզմի և պատերազմի դեմ միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունն իրականացնելու համար։ Սակայն, նույնիսկ այս տարրական պայմանների կիրառմանը հենց դեմ է գնում այն լիդերների գործունեությունը, որոնք վճռական խոսք ունեն Յերկրորդ և Ամստերդամի ինտերնացիոնալների քաղաքականությունը վորոշելու գործում։ Այդ լիդերները վոչ միայն սիստեմատիկորեն մերժում են կոմունիստական կուսակցությունների ու կոմունիստական Ինտերնացիոնալի առաջարկությունները իսպանական ժողովրդի պաշտպանության համար համատեղ գործողությունների ձևավորելու մասին, այլև նրանք ճնշում են II Ինտերնացիոնալի այն կազմակերպությունների նախաձեռնությունը, որոնք կոմունիստների հետ միասին ընդհանուր ճակատով հանդես են գալիս Իսպանիայի ֆաշիզմի և գերմանական ու իտալական ինտերվենտների դեմ։ Յերկրորդ և Ամստերդամի ինտերնացիոնալները Լոնդոնում գումարված կոնֆերենցիաներում Իսպանիայի սոցիալիստական կուսակցության և Ընդհանուր բանվորական միության պատվիրակներն իզուր փորձեցին փչրել իսպանական ժողովրդի հերոսական կռվի վերաբերմամբ ցուցաբերվող անտարբերության սառցե պատը։ Նրանք Յերկրորդ և Ամստերդամի ինտերնացիոնալներին իզուր կոչ արին բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունների միատեղ գործողությունների ճանապարհով պաշտպանել հանրապետական Իսպանիայի կռիվը։ Իսպանիայի պատվիրակները հեռացան կոնֆերենցիայից խորապես հիասթափված։ Յերկու ինտերնացիոնալներն էլ իրենց վորոշումներով դուրս չեկան անգլիական պահպանողականների համար ընդունելի հայտարարությունների և վորոշումների շրջանակներից։

Բանվոր դասակարգի միասնության թշնամիները, այդ ինտերնացիոնալների շար-

քերին պատկանող ռեակցիոն լիդերները վոչ միայն սարոտաժի յեն յենթարկում իսպանական ժողովրդին ամենակողմանի, վճռական ոգնություն հասցնելու գործը, այլև ավելի առաջ են գնում: Նրանք ձեռք են առնում բոլոր միջոցները, վորպեսզի պառակտեն ժողովրդական ճակատը հենց Իսպանիայում, ինտրիգներ են լարում, անվստահություն են սերմանում, սոցիալիստական ղեկավարներին լարում են կոմունիստական կուսակցության դեմ. դրանով իսկ թուլացնելով թե ժողովրդական ճակատի ամրությունը, թե՛ Իսպանական հանրապետության պաշտպանունակությունը: Սրա հետ միասին, այժմ, յերբ գործողությունների միասնություն հաստատած և ժողովրդական ճակատի հիմքի վրա Ֆաշիզմին հակահարված տված ֆրանսական պրոլետարիատի որինակը վոգևորում է բոլոր յերկիրների բանվոր դասակարգին, ռեակցիոն լիդերները հյուսում են ինտրիգների ցանց, վորոնց նպատակն է անվստահություն բորբոքել Ֆրանսիայի սոցիալիստա-

կան և կոմունիստական կուսակցությունների միջև, խափանել ժողովրդական ճակատը և նախապատրաստել պայմաններ բուրժուազիայի և սոցիալիստական կուսակցության աջ տարրերի կոալիցիայի կառավարության ստեղծման համար, մի կառավարություն, վոր ուղղված է լինելու կոմունիստների և ժողովրդական ճակատի շարժման դեմ: Նրանք, այդպիսով, զոհ են բերում բանվոր դասակարգի շահերը ի հաճույս բուրժուազիայի ամենառեակցիոն խավերի: Այդ լիդերների համար գլխավոր թշնամին վոչ թե ֆաշիզմն է, այլ կոմունիզմը: Սիարինի, Բեվինի, Ագլերի համար գլխավոր հակառակորդը վոչ թե Ֆրանկոն է, այլ իսպանական ժողովրդի հերոսուհի Դոլորես Իբարբուրին, վո՛չ թե դեյյա Ռոկը և Հիտլերը, այլ Թորեզը և Թելմանը:

III

Միամտություն կլիներ մտածել, թե պրոլետարիատի գործողությունների միաս-

նութեան կարելի է հասնել ռեակցիոն լիդերներին հորդորելու, խրատ տալու կամ անիծելու միջոցով։ Չի կարելի միջազգային պրոլետարիատի միասնութեան հասնել, առանց միասնութեան բոլոր կողմնակիցների համառ պայքարի՝ ընդդեմ միասնութեան բացահայտ ու թաղնված թշնամիների։

Ցերբեմն սոցիալիստների շարքերից լսվում են ձայներ, վորոնք պնդում են, թե կոմունիստները Ցերկրորդ և Ամստերդամի ինտերնացիոնալների լիդերների վարմունքի բացահայտ և ուղղակի քննադատությամբ դժվարացնում են միասնական ճակատի ստեղծումը։ Բայց մի՞թե կարելի է միասնական ճակատի հասնել, վճռականորեն չքննադատելով նրանց, ովքեր բոլոր միջոցներով խանգարում են այդ գործին։ Բանվորական շարժման ի՞նչ տեսակ գործիչներ կլինեինք մենք, եթե բացահայտ կերպով ամբողջ ճշմարտությունը չասեինք ամբողջ բանվոր դասակարգի համար այդպիսի կարևորագույն հարցի մասին։

Բանվոր դասակարգի միասնության գործին չի ոգնում նա, ով լռության է տալիս կամ թաղցնում է այն վնասակար գործողությունները, վոր կատարում են ռեակցիոն լիդերները բանվորական շարժման շարքերում։ Ով հրաժարվում է,—իբր թե յելնելով միասնական պրոլետարական հակատի շահերից,—այդ միասնության թշնամիների դեմ պայքարելուց և բանվորական շարժումը բուրժուազիայի շահերին յենթարկող ռեֆորմիզմը քննադատելուց, նա վատ ծառայություն է մատուցում բանվոր դասակարգին։

Կոմունիստական Ինտերնացիոնալի VII կոնգրեսը ազդարարելով պրոլետարական և ժողովրդական ճակատի միասնության քաղաքականությունը, «Ֆաշիզմի հարձակումը և կոմունիստական Ինտերնացիոնալի խնդիրները Ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայ-

քարում» վերնագրով իր բանաձևի մեջ հատկապես մատնանշել է.

«Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և կազմակերպությունների հետ համատեղ գործողությունները վոչ միայն չեն բացառում, այլ, ընդհակառակը, եվ ավելի անհրաժեշտ են դարձնում լուրջ ու հիմնավորված կերպով քննադատելու ռեֆորմիզմը, սոցիալ-դեմոկրատիզմը՝ վորպես բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության գաղափարախոսություն ու պրակտիկա և սոցիալ-դեմոկրատական բանվորներին համբերատար կերպով բացատրելու կոմունիզմի ըսկզբունքներն ու ծրագիրը»[1]:

[1] Резолюции VII Всемирного конгресса Коммунистического Интернационала, стр. 16. Партиздат, 1935 г.

Ֆաշիզմի ու պատերազմի դեմ պայքարող բանվոր դասակարգի միասնության համար և ժողովրդական ճակատ ստեղծելու համար վատ մարտընչող է նա, ով VII կոնգրեսի այս ցուցումին չի հետևում: Խորապես սխալվում է նա, ով կարծում է, թե հանուն ժողովրդական ճակատի պայքարելն ապատում է մեզ բանվորական շարժման սկզբունքային հիմունքների և արմատական շահերի համար, բանվոր դասակարգի նկատմամբ թշնամական թեորիաների ու հայացքների դեմ պայքար մղելու անհրաժեշտությունից: Այդպիսի պայքարից միասնական ճակատի գործը չի տուժի, նա կարող է միայն շահել: Դեռ ավելին, այդպիսի պայքարն անհրաժեշտ պայման է հանդիսանում ֆաշիզմի և պատերազմի դեմ մղվող պայքարի ժողովրդական ճակատն իրապես ամրացնելու և ծավալելու համար:

Ցերբե՛ք չի կարելի մոռանալ, վոր հետևողականորեն ու համառորեն պայքարելով հանուն ժողովրդական միասնական

ճակատի հաստատման, կոմունիստները վարում են ոչ թե անակզբունք բլոկի քաղաքականություն, այլ սկզբունքային քաղաքականություն:

Ցերը մենք վճռական պայքար ենք մղում դեմոկրատական ազատությունների և իրավունքների համար, ռեակցիայի և ֆաշիզմի դեմ, մենք այդ անում ենք իբրև մարքսիստներ, իբրև հեղափոխական պրոլետարական հեղափոխականներ և ոչ թե իբրև բուրժուական դեմոկրատներ կամ ռեֆորմիստներ: Ցերը մենք հանդես ենք գալիս պաշտպանելու մեր ժողովրդի ազգային շահերը, պաշտպանելու նրա անկախությունն ու ազատությունը, մենք չենք պառնում նացիոնալիստներ, բուրժուական հայրենասերներ, այլ այդ անում ենք իբրև պրոլետարական հեղափոխականներ և մեր ժողովրդի հավատարիմ զավակներ: Ցերը մենք հանդես ենք գալիս պաշտպանելու կրոնի ազատությունը, հավատացյալներին ֆաշիստական հալածանքի յենթարակելու դեմ, մենք չենք նահանջում մարքսիստա-

կան մեր աշխարհայացքից, որն ազատ է ամեն մի կրոնական նախապաշարմունքից:

Ֆաշիզմի ու պատերազմի դեմ ժողովրդական ճակատի քաղաքականություն վարելով, աշխատավորական այլ կուսակցությունների ու կազմակերպությունների հետ համատեղ գործողությունների դուրս գալով ընդհանուր թշնամու դեմ, պայքարելով աշխատավորության կենսական շահերի ու դեմոկրատական իրավունքների համար, խաղաղության և ազատության համար, կոմունիստներն աչքաթող չեն անում իր դարն ապրած կապիտալիզմը հեղափոխականորեն տապալելու և բանվոր դասակարգին ու ամբողջ մարդկությանն ազատություն բերող սոցիալիզմն իրականացնելու պատմական անհրաժեշտությունը:

Ճիշտ կերպով դուգադրել ժողովրդական ճակատի քաղաքականության կիրառումը մարքսիստական պրոպագանդայի հետ, բանվորական շարժման կազրերի թեորետիկ մակարդակը բարձրացնելու, Մարքսի–Ենգելսի–Լենինի–Ստալինի մեծ ուսման-

քին—իբրև գործողության ղեկավարության —տիրապետելու հետ—այդ մենք պետք է սովորենք և ամեն որ սովորեցնենք մեր կադրերին ու մասսաներին: Չի կարելի թույլ տալ, վոր «ծառերը նշմարելով անտառը չտեսնենք»: Չի կարելի թույլ տալ, վոր թեորիան կտրված լինի պրակտիկայից, վոր խզում լինի այսորվա ակտուալ խնդիրների կատարման և բանվոր դասակարգի պայքարի հետագա հեռանկարի ու նպատակների միջև: Չի կարելի մոռանալ, վոր ժողովրդական ճակատի շարժումը ինչքան ավելի յե ընդարձակվում, շարժման տակտիկական պրոբլեմները վորքան ավելի յեն բարդանում, այնքան ավելի անհրաժեշտ է դառնում պայքարող ուժերի դրության ու փոխհարաբերության խակական մարքսիստական վերլուծությունը, այնքան ավելի անհրաժեշտ է ձեռքում ունենալ մարքսիստական–լենինյան թեորիայի հուսալի կողմնացույցը:

* *
*

Ֆաշիզմի դեմ ազգային և միջազգային

մասշտաբով ժողովրդական միացյալ ճակատ ստեղծելու և ամրացնելու գործում պրոլետարիատն ամենահետևողական մարտընչողն է: Ժողովրդական ճակատն առանց պրոլետարիատի ընդհանրապես անհնար է: Պրոլետարիատը—այդ հիմնական շարժիչ ուժն է ամեն մի հակաֆաշիստական ժողովրդական շարժման, հանուն դեմոկրատիայի և խաղաղության պաշտպանության ամեն մի մասսայական շարժման: Դեմոկրատական մանր բուրժուազիայի, գյուղացիության, ինտելիգենցիայի հետ նա համատեղ պայքար է մղում նրանց ընդհանուր թշնամու դեմ: Սակայն, պրոլետարիատը առաջին հերթին հույսը պետք է դնի իր սեփական ուժերի վրա, բանվորական շարժման շարքերի միասնության վրա յուրաքանչյուր առանձին յերկրում և միջազգային բանվորական շարժման միասնության վրա: Վորովհետև վորքան ավելի յե համախմբված և կազմակերպված պրոլետարիատը, այնքան ավելի հաստատ կկարողանա նա պաշտպանել իր դասակարգային

շահերը և այնքան ավելի լավ կկարողանա կատարել իր առաջատար դերը միասնական ժողովրդական շարքերում։

Այստեղից կոմունիստների և բոլոր դիտակից բանվորների համար ծագում են հետևյալ խնդիրները — չինայել ուժերը։ Ոչ մի դժվարության առաջ կանգ չառնել, առանց ոգևորվելու չթողնել ամենափոքր հնարավորությունն իսկ առաջ շարժելու բանվոր դասակարգի գործողությունների միասնության գործն ազգային և միջազգային մասշտաբով։ Այս գործը պետք է զարգացնել ընդհուպ մինչև արհշարժման լիակատար միասնության հասնելը և մինչև պրոլետարիատի մասսայական միասնական կուսակցություն ստեղծելը։ Ցեվ այստեղ պետք է պարզ ասել, որ այնքան ավելի շուտ կիրականացվի պրոլետարիատի միասնությունը, ժողովրդական միացյալ ճակատի ստեղծման և ամրացման գործում այնքան ավելի շատ հաջողություններ կլինեն, ինչքան իրենք, կոմունիստական կուսակցությունները թվական, կազմակերպական, իդեոլոգիական տեսակետով ավելի ուժեղ կլինեն, ինչքան ավելի շատ կվայելեն նրանք բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների լավագույն, առաջավոր տարրերի վստահությունն ու աջակցությունը։ Վորովհետև կոմունիստներն ամենավճռական և ամենահետևողական մարտնչողներն են հանուն բանվոր դասակարգի միասնության իրականացման՝ ազգային և միջազգային մասշտաբով։

Դեռևս միջազգային կոմունիստական շարժման արշալույսին Մարքսն ու Ենգելսը «Կոմունիստական մանիֆեստում» բնորոշելով կոմունիստների պատմական դերը միջազգային պրոլետարիատի շարքերում, ասում էին.

«Նրանք չունեն վորևե շահ, վոր անջատ լինի վողջ պրոլետարիատի շահերից...

Հետևապես, կոմունիստները գործնականում բոլոր յերկիրների բանվորական կուսակցությունների ամենա-

վճռական, մինչև առաջ մղող մասն են, իսկ թեորիապես պրոլետարիատի մնացած մասսայի հանդեպ նրանց առավելությունն այն է, որ գիտեն պրոլետարական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր հետևանքները»[1]:

Հանդիսանալով իրենց դասակարգի հավատարիմ դավակներ, իրենց ժողովրդի շահերի պաշտպաններ, աղատ լինելով բուրժուազիայի հետ վորևե կապ և կախում ունենալուց, լինելով մինչև վերջը հետևողական ինտերնացիոնալիստներ, կոմունիստներն ամենից ավելի լավ կարող են խաղալ միավորող ողակի դերը հենց պրոլետարիատի շարքերում, ինչպես նաև աշխատավորության բոլոր հակաֆաշիստական կուսակցությունների, կազմակերպությունների և խմբերի, դեմոկրատական

1 Մարքս և Ենգելս, Կոմունիստական մանիֆեստը, էջ 41, Հայկոսհրատ, 1937 թ.:

մանը բուրժուազիայի, գյուղացիության և ինտելիգենցիայի միջև՝ ֆաշիզմի և պատերազմի դեմ մղված պայքարում:

Հետևաբար բանվոր դասակարգի միասնության, միասնական ժողովրդական հակատի համար մղվող պայքարում հաջողություն ձեռք բերելու տեսակետից անհրաժեշտ է ամեն որ և անխոնջ աշխատել ուժեղացնելու և ամրացնելու կոմունիստական կուսակցությունների և ամբողջ կոմունիստական ինտերնացիոնալի շարքերը: Այդ են թելադրում ինչպես միջազգային պրոլետարիատի, այնպես էլ ամբողջ աշխատավոր պրոգրեսիվ մարդկության կենսական շահերը:

Թարգմ. Վիվան
Խմբագրեցին Ս. Կիրակոսյան [redacted]
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր Ի—71641, հրատ. № 489,
պատվեր № 151, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 4/VIII 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 22/VIII 1937 թ.
Գինը 25 կ.

Հայկուսնրատի տպարան, Երևան,
Աբովյան № 71

ՀՀ Ազգային գրադարան
NL0977643

416

ԳԻՆԸ 25 Կ.

7 СЕН. 1937

1
3716

Г. ДИМИТРОВ

ЕДИНСТВО МЕЖДУНАРОДНОГО ПРОЛЕТАРИАТА ВЫСШЕЕ ВЕЛЕНИЕ ПЕРЕЖИВАЕМОГО МОМЕНТА

Армпартиздат, Ереван, 1937